ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 13.11.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/250

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ
Մասնակից՝ «Էլաամոդա» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, հանդերձանքի ձեռքբերում:

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 22.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16008-2020 գրությամբ «Էլաամոդա» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Պատվիրատու) 16.10.2020թ. թիվ Ե/40/1978-20 գրության հիման վրա, 22.10.2020թ.-ին «Էլաամոդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 22.10.2020թ.-ին:

22.10.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/250 համարի ծածկագիրը և հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 13.11.2020թ.-ին:

2. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ն 16.10.2020թ. թիվ Ե/40/1978-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից (այսուհետ՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ) սեփական կարիքների համար հանդերձանքի ձեռք բերման նպատակով հրապարակվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով գնման ընթացակարգը, որին ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտ է ներկայացրել «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊ ընկերությունը: Գնահատող հանձնաժողովի՝ ս/թ մայիսի 21-ի թիվ 4 որոշմամբ թիվ 1, 4, 9, 10, 11, 19 և 20 չափաբաժնով «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն ճանաչվել է ընտրված մասնակից և առաջարկվել է կնքել հանդերձանքի մատակարարման պայմանագիր: «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի և «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի միջև ս/թ հունիսի 23-ին կնքվել է թիվ 01/148 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր): Պայմանագրով մատակարարվող ապրանքի տեխնիկական բնութագիր է սահմանվել «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի մասնակցության հայտի Հավելված 1.1-ով նշված տեխնիկական բնութագիրը, այն է՝ «Բանվորական, գույնը՝ սև, աշխատանքային կոշիկներ պոլիուրեթանային ներբանով: Վերին մասը՝ բնական կաշվից անջրանցիկ ծածկույթով (юфть), լեզվակը՝ կաշվե: Ներբանը պոլիուրեթանային, անտիստատիկ, ներբանի կցման

եղանակը՝ սոսինձ, միջատակը՝ շարժական (ЭВА/текстиль): Քթամասը՝ մետաղական մինչև 200 ջոուլ ուժից պաշտպանվելու համար (подносок металлический (200Дж)), կոշկաքուղեր (шнурки): Գույնը՝ սև, քաշը՝ 1,1 կգ, կաշին փոսիկներով (չծակված), ГОUS 12.4.137-84 ТР ТС 019/2011», իսկ մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագրի կնքման օրվանից 50 օրացուցային օր, որը «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի առաջարկությամբ ս/թ օգոստոսի 11-ին կողմերի միջև կնքված լրացուցիչ համաձայնագրով երկարացվել է ևս 30 օրացուցային օրով (վերջնաժամկետը 11.09.2020 ներառյալ):

«ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ի կողմից մատակարարված կոշիկների վերաբերյալ առկա է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի՝ ս/թ հոկտեմբերի 5-ի թիվ 10.20-281 ակտը, որտեղ նշված է, որ բացակայում է բնական կաշի լինելը հաստատող փաստաթուղթը և «ՍԻՍՏԵՄԷՔՍ» ԲԲԸ անկախ փորձագիտական լաբորատորիայի կողմից ս/թ հոկտեմբերի 9-ին տրված թիվ 2-20201009-1 փորձարկման արձանագրությունը, որով տրվել է հետևյալ եզրակացությունը՝ կոշիկ բանվորական, սև գույնի, նախշով (նակատ), երեսամասը կրկնակիչ բազմաշերտ նյութից է, որի առաջին շերտը սև գույնի պոլիամիդային կաշվե կտորից է, հակառակ կողմը պատված է ջրակայուն լատեքսային շերտով, երկրորդը՝ փրփրապոլիուրէթանային քաթանանման շերտ է, երրորդ շերտը սինտեպոնից է, չորրորդ շերտը բարակ, ցանցաձև, սինթետիկ կտոր է: Լեզվակը արհեստական կաշվից է: Տակացուն և ներբանը պոլիուրէթանային պոլիմեր է: Նշված երկու փաստաթղթերը վկայում են այն մասին, որ «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ կողմից մատակարարված կոշիկները չեն համապատասխանում պայմանագրին:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի կողմից ս/թ հոկտեմբերի 14-ին «ԷԼԱԱՄՈԴԱ» ՍՊԸ-ն ծանուցվել է կողմերի միջև ս/թ հունիսի 23-ին կնքված թիվ 01/148 պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, որը սահմանված կարգով նույն օրը հրապարակվել է նաև www.gnumner.am կայքում:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Էլաամոդա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Էլաամոդա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 26.10.2020թ.-ի գրությամբ դիմել է «Էլաամոդա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16008-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2020/250 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Էլաամոդա» ՍՊԸ-ի միջև 23.06.2020թ.-ին կնքվել է թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրերով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված հանդերձանք (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի թիվ 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով 1-ին չափաբաժնով սահմանված «կոշիկ» ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ «Բանվորական, գույնը՝ սև, աշխատանքային կոշիկներ պոլիուրեթանային ներբանով: Վերին մասը՝ բնական կաշվից անջրանցիկ ծածկույթով (юфть), լեզվակը՝ կաշվե: Ներբանը պոլիուրեթանային, անտիստատիկ, ներբանի կցման եղանակը՝ սոսինձ, միջատակը՝ շարժական (ЭВА/текстиль): Քթամասը՝ մետաղական մինչև 200 ջոուլ ուժից պաշտպանվելու համար (подносок металлический (200Дж)), կոշկաքուղեր (шнурки): Գույնը՝ սև, քաշը՝ 1,1 կգ, կաշին փոսիկներով (չծակված), ГОUS 12.4.137-84 TP TC 019/2011»:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 05.10.2020թ.-ին կազմված թիվ 10.20-281 ակտի համաձայն՝ բացակայում է բնական կաշի լինելը հաստատող փաստաթուղթը:

«Սիստեմէքս» ԲԲԸ-ի անկախ փորձագիտական լաբորատորիայի կողմից 09.10.2020թ.-ին տրված թիվ 2-20201009-1 փորձարկման արձանագրության համաձայն՝ կոշիկ բանվորական, սև գույնի, նախշով (նակատ), երեսամասը կրկնակիչ բազմաշերտ նյութից է, որի առաջին շերտը սև գույնի պոլիամիդային կաշվե կտորից է, հակառակ կողմը պատված է ջրակայուն լատեքսային շերտով, երկրորդը՝ փրփրապոլիուրէթանային քաթանանման շերտ է, երրորդ շերտը սինտեպոնից է, չորրորդ շերտը բարակ, ցանցաձև, սինթետիկ կտոր է: Լեզվակը արհեստական կաշվից է: Տակացուն և ներբանը պոլիուրէթանային պոլիմեր է: Նշված երկու փաստաթղթերը վկայում են այն մասին, որ «Էլաամոդա» ՍՊԸ կողմից մատակարարված կոշիկները չեն համապատասխանում պայմանագրին:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 14.10.2020թ.-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/40/1944-20 ծանուցման համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Էլաամոդա» ՍՊԸ-ի միջև 23.06.2020թ.-ին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով պետական գնման պայմանագիրը՝ 1-ին չափաբաժնի մասով, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 05.10.2020թ.-ին կազմված թիվ 10.20-281 ակտն ու «Սիստեմէքս» ԲԲԸ անկախ փորձագիտական լաբորատորիայի կողմից 09.10.2020թ.-ին տրված թիվ 2-20201009-1 փորձարկման արձանագրությունը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16008-2020 գրությամբ «Էլաամոդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխա-նատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի

պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1-րդ կետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված հանդերձանք (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը: Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 30 օրացուցային օրից ավելի:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի

մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Էլաամոդա» ՍՊԸ-ի միջև 23.06.2020թ.-ին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրերով պետական գնման պայմանագրի թիվ 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով 1-ին չափաբաժնով սահմանված «կոշիկ» ապրանքի համար սահմանվել է հետևյալ տեխնիկական բնութագիրը՝ «Բանվորական, գույնը՝ սև, աշխատանքային կոշիկներ պոլիուրեթանային ներբանով: Վերին մասը՝ բնական կաշվից անջրանցիկ ծածկույթով (юфть), լեզվակը՝ կաշվե: Ներբանը պոլիուրեթանային, անտիստատիկ, ներբանի կցման եղանակը՝ սոսինձ, միջատակը՝ շարժական (ЭВА/текстиль): Քթամասը՝ մետաղական մինչև 200 ջոուլ ուժից պաշտպանվելու համար (подносок металлический (200Дж)), կոշկաքուղեր (шнурки): Գույնը՝ սև, քաշը՝ 1,1 կգ, կաշին փոսիկներով (չծակված), ԳOUS 12.4.137-84 TP TC 019/2011»:

«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 05.10.2020թ.-ին կազմված թիվ 10.20-281 ակտի համաձայն՝ բացակայում է բնական կաշի լինելը հաստատող փաստաթուղթը:

«Սիստեմէքս» ԲԲԸ-ի անկախ փորձագիտական լաբորատորիայի կողմից 09.10.2020թ.-ին տրված թիվ 2-20201009-1 փորձարկման արձանագրության համաձայն՝ կոշիկ բանվորական, սև գույնի, նախշով (նակատ), երեսամասը կրկնակիչ բազմաշերտ նյութից է, որի առաջին շերտը սև գույնի պոլիամիդային կաշվե կտորից է, հակառակ կողմը պատված է ջրակայուն լատեքսային շերտով, երկրորդը՝ փրփրապոլիուրէթանային քաթանանման շերտ է, երրորդ շերտը սինտեպոնից է, չորրորդ շերտը բարակ, ցանցաձև,

սինթետիկ կտոր է: Լեզվակը արհեստական կաշվից է: Տակացուն և ներբանը պոլիուրէթանային պոլիմեր է: Նշված երկու փաստաթղթերը վկայում են այն մասին, որ «Էլաամոդա» ՍՊԸ կողմից մատակարարված կոշիկները չեն համապատասխանում պայմանագրին:

www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 14.10.2020թ.-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման մասին թիվ Ε/40/1944-20 ծանուցման համաձայն՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի և «Էլաամոդա» ՍՊԸ-ի միջև 23.06.2020թ.-ին կնքված թիվ «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-52/20» ծածկագրով պետական գնման պայմանագիրը՝ 1-ին չափաբաժնի մասով, «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից միակողմանի լուծվել է՝ հիմք ընդունելով «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ-ի կողմից 05.10.2020թ.-ին կազմված թիվ 10.20-281 ակտն ու «Սիստեմէքս» ԲԲԸ անկախ փորձագիտական լաբորատորիայի կողմից 09.10.2020թ.-ին տրված թիվ 2-20201009-1 փորձարկման արձանագրությունը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ տվյալ դեպքում, Պայմանագրով Մասնակցի վրա դրված պարտավորությունների ենթադրյալ խախտումը տեղի է ունեցել Պատվիրատուի անգործության արդյունքում, վերջինս է նպաստել պարտավորությունները չկատարելուն և ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Սույն գործում առկա փաստերով չի հիմնավորվում, որ Պատվիրատուն, հիմք ընդունելով 05.10.2020թ.-ին կազմված թիվ 10.20-281 ակտն ու 09.10.2020թ.-ին տրված թիվ 2-20201009-1 փորձարկման արձանագրությունը, 14.10.2020թ.-ի թիվ Ε/40/1944-20 գրությամբ Մասնակցին տեղեկացնելով վերջինիս կողմից մատակարարված ապրանքի Պայմանագրի տեխնիկական բնութագրի պահանջներին չհամապատասխանելու փաստի մասին, տրամադրել է ողջամիտ ժամկետ, որպես Պատվիրատուի համար ընդունելի ժամկետ՝ աշխատանքը Պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանեցնելու համար: Այս փաստի առկայության պարագայում, միայն հնարավոր կլիներ փաստել Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետով սահմանված դրույթների կիրառման մասին, որն էլ, իր հերթին կհանգեցներ ժամկետների խախտմանը և դրանով պայմանավորված՝ հետագայում էլ (սույն ընթացակարգի քննության ժամանակ) հնարավոր լիներ գնահատելու Պատվիրատուի գործողությունների օրինաչափությունը, և

վերջապես գնահատելու Մասնակցի՝ Պայմանագրով ստանձնած պարտավորության խախտման փաստը:

Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետի համաձայն՝ եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք, Գնորդն իրավունք ունի չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 110-րդ կետի 3-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ եթե պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրվել է բացասական եզրակացություն, ապա եզրակացությունն ստանալու օրը պատասխանատու ստորաբաժանման ղեկավարը եզրակացությունը և իր կողմից չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով տրամադրում է պատվիրատուի ղեկավարին, որոնք վերջինս մեկ աշխատանքային օրվա ընթացքում տրամադրում է պայմանագիր կնքած անձին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը

տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուն Մասնակցին (վաճառողին) չի տրամադրել ողջամիտ ժամկետ՝ անպատշաճ որակի ապրանքը Պատվիրատուի համար ընդունելի ժամկետում Պայմանագրին համապատասխանող ապրանքով անհատույց փոխարինելու համար, որիպիսի պայմաններում խախտվել են Պայմանագրի 2.1.2 կետի «բ» ենթակետով սահմանված դրույթների պահանջները, նման պայմաններում «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 22.10.2020թ.-ի թիվ 26/26-1/16008-2020 գրությամբ «Էլաամոդա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/250 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**